

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Մ Ե Թ Ո Դ Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ**

Կազմել են՝  
ի.գ.դ., պրոֆ. Գ.Յ.Ղարախանյանը  
ի. գ. թ., դոց. Ս.Գ.Մեղրյանը

*Հաստատվել է*  
*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի*  
*խորհրդի 2013թ. ապրիլի 9-ի նիստում*

**ԵՐԵՎԱՆ - 2013**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ .....	3
2. ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.....	4
3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄԸ .....	5
4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ.....	7
5. ՇԱՐԱԴՐԱՆՔԻ ՈՃԸ .....	14
6. ՄԵԶԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ .....	17
7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԾԱՎԱԼԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ .....	28
8. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ .....	29

## **1. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ**

**Ավարտական աշխատանքը** բակալավրիատի ուսանողի կողմից ավարտական ուսումնական տարվա ընթացքում կատարվող պարտադիր հետազոտություն է, որը հավաստում է բակալավրի կրթական ծրագրով նախատեսված ելքային գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Ավարտական աշխատանքները գնահատվում են ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգով կազմակերպված պաշտպանության արդյունքներով: Հաջող պաշտպանության դեպքում ուսանողին շնորհվում է 12 կրեդիտ:

Ավարտական աշխատանքի թեման ընտրվում ու հաստատվում է, և դեկավարը նշանակվում է ավարտական ուսումնական տարվա առաջին երկու շաբաթների ընթացքում:

**Մագիստրոսական աշխատանքը (թեզը)** մագիստրատուրայի ուսանողի կողմից ուսումնառության ողջ ընթացքում կատարվող հետազոտություն է, որը հավաստում է մագիստրոսի կրթական ծրագրով նախատեսված ելքային գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Մագիստրոսական աշխատանքները գնահատվում են ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգով կազմակերպված պաշտպանության արդյունքներով: Հաջող պաշտպանության դեպքում մագիստրանտին շնորհվում է 12 կրեդիտ:

Մագիստրոսական թեզի թեման ընտրվում և հաստատվում է, իսկ դեկավարը նշանակվում է ուսումնառության առաջին կիսամյակի ընթացքում:

Ավարտական և մագիստրոսական աշխատանքներ գրելն իրավաբան ուսանողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձև է: Նշված աշխատանքները նպատակ են հետապնդում ուսանողների մոտ զարգացնել ինքնուրույն գիտական հետազոտություններ իրականացնելու, ստեղծագործական վերլուծություն և ընդհանրացումներ կատարելու, օրենսդրության զարգացման հիմնական միտումները վերլուծելու և բացահայտելու, տեսական ու գործնական նյութերն ուսումնասիրելու միջոցով հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մեջ գոյություն ունեցող խնդիրները վեր հանելու, դրանց վերաբերյալ սեփական կարծիք ձևավորելու, հիմնավորելու և գրավոր շարադրելու, ինչպես նաև գիտականորեն հիմնավորված առաջարկու-

թյուններ մշակելու և ներկայացնելու ունակություններ: Նշված աշխատանքները հնարավորություն են տալիս դատելու ուսանողի՝ գրականությունից օգտվելու, իրավական ակտերի և փաստաթղթերի հետ աշխատելու, կոնկրետ խնդիրների լուծման համար դրանք օգտագործելու կարողության և պատրաստվածության, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակության մասին:

Նշված աշխատություններն իրենց բնույթով գիտական են, ուստի պետք է բավարարեն նման աշխատանքներին ներկայացվող պահանջները, որոնց անդրադառնում ենք ստորև:

## **2. ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ամբիոնն ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմայի ընտրության հարցում ուսանողի համար ապահովում է լայն հնարավորություններ: Յուրաքանչյուր տարի համապատասխան ամբիոնի նիստերում հաստատվում են համապատասխան թեմաներ, որոնցից ուսանողն իրավունք ունի ընտրելու այլ ուսանողների կողմից դեռևս չընտրված ցանկացած թեմա: Նա կարող է նաև ամբիոնի համաձայնությամբ աշխատանք կատարել առաջադրված թեմայի որևէ հարցի վերաբերյալ (թեման նեղացնել) կամ ընտրել այնպիսի թեմա, որը ցանկում նշված չէ: Բոլոր դեպքերում ընտրված թեման պետք է լինի արդիական: Արդիականությունն աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջներից է: Այն ենթադրում է աշխատության համապատասխանությունը գիտության այսօրվա մակարդակին, իրական պահանջներին և աշխատանքի պիտանելիությունը՝ որպես գիտության առկա խնդիրների լուծման փորձ:

Թեման պետք է ընտրել այնպես, որ այն նպաստի ուսանողի հնարավորությունների, գիտելիքների, հետաքրքրությունների առավելագույն բացահայտմանը: Բնականաբար, ինչքան շատ է ուսանողը զբաղվել այս կամ այն թեմայով, ինչքան շատ ունի դրա հետ կապված ինքնատիպ գաղափարներ, թեմային վերաբերող գրականության և գործնական նյութերի ձեռքբերման հնարավորություններ, այնքան ավելի լավ կստացվի աշխատանքը:

Եթե ուսանողը չի կարողանում ինքնուրույն ընտրել աշխատանքի թեման, նա կարող է դիմել ամբիոնի դասախոսների օժանդակությանը, որոնց պարտականության մեջ է մտնում թեմայի ընտրության գործում

ուսանողին կողմնորոշելը:

Թեման ընտրելուց հետո ամբիոն պետք է ներկայացվի դիմում՝ հետևյալ բովանդակությամբ:

**ԵՊՀ \_\_\_\_\_ ամբիոնի վարիչ \_\_\_\_\_ -ին**

**Քակավորիատի չորրորդ կուրսի \_\_\_\_\_ հոսքի ուսանող / Մագիստրատուրայի առաջին տարվա մագիստրանտ \_\_\_\_\_ -ից**

**Յեռ.՝ \_\_\_\_\_ (ԲԶԶ.), \_\_\_\_\_ (ԲՆ.)**

**ԴԻՄՈՒՄ**

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը կատարելու ավարտական / մագիստրոսական աշխատանք « \_\_\_\_\_ » առարկայից \_\_\_\_\_ թեմայով:

**ԴԻՄՈՂ՝ \_\_\_\_\_ /ԱԱՅ/ ամսաթիվ**

Ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաները և գիտական ղեկավարները հաստատվում են ամբիոնի նիստում:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Ինչպես յուրաքանչյուր նպատակաուղղված գործունեություն, ավարտական և մագիստրոսական աշխատանք գրելը ևս պետք է պլանավորվի: Դա հնարավորություն է տալիս ընտրված թեմայի վերաբերյալ գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների առավել նպատակաուղղված փնտրուղի իրականացնել, ավելի խոր իմաստավորել ձեռք բերված նյութերը և մոտավոր պատկերացում կազմել աշխատանքի շրջանակներում քննարկման ենթակա հարցերի շարադրման հաջորդականության մասին:

Աշխատանքի նախնական պլանը կազմվում է աշխատանքը կատա-

րողի կողմից: Նախնական պլանը կազմելուն մասնակցում է (բայց ոչ ուսանողի փոխարեն կազմում) գիտական ղեկավարը, որի գործառնությունների մեջ է մտնում ոչ միայն թեմայի ընտրության, այլև աշխատանքային պլանը կազմելու գործում օգնություն ցուցաբերելը և աշխատանքային պլանը հաստատելը:

Աշխատանքի կատարման ընթացքում նախնական պլանի մեջ, բնականաբար, ղեկավարի հետ համաձայնեցնելուց հետո կարող են կատարվել որոշ փոփոխություններ: Աշխատանքի վերջնական պլանն ուրվագծվում է աստիճանաբար, աշխատանքի կատարմանը զուգահեռ:

Պլանի կետերի տրամաբանական հաջորդականությունն ունի առաջնային նշանակություն:

Ավարտական և մագիստրոսական աշխատանքները, թեմայի տրամաբանական կառուցվածքին համապատասխան, բաժանվում են 2-ից ոչ պակաս գլուխների, իսկ վերջիններս, որպես կանոն՝ 2-ից ոչ պակաս պարագրաֆների ու, ըստ անհրաժեշտության, ենթապարագրաֆների: Գլուխները և պարագրաֆները մեկը մյուսից տարանջատվում են վերնագրերով: Գլուխների վերտառությունները գրվում են մեծատառերով և առանց վերջակետի: Դրանք համարակալվում են հռոմեական, իսկ պարագրաֆները՝ արաբական թվերով, օրինակ՝

*ԳԼՈՒԽ 1.*

*ՎՃՌԻ ՅԱՍԿԱԳՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ*

*§1. Վճռի հասկացությունը և իրավական բնույթը*

*§2. Վճռի տեսակները*

...

Ցանկալի է, որ գլուխների և պարագրաֆների բաժանումը կատարվի համեմատաբար համամասնորեն:

Աշխատանքի պլանը կարելի է դիտարկել որպես շարադրանքի տրամաբանական կմախք, որում ամեն ինչ պետք է լինի իր տեղում:

Որպեսզի աշխատանքի պլանը լինի լիովին պարզ և ճիշտ, ուսանողը պետք է ձգտի մակետավորել աշխատանքը որպես տրամաբանական ամբողջություն՝ մտածելով առանձին գլուխների և պարագրաֆների ճիշտ անվանման և դասավորության մասին: Գլուխների և պարագրաֆների անվանումները պետք է ձևակերպել այնպես, որ դրանք չլինեն բովանդակության առումով թեմայից լայն կամ նրան հա-

վասարագոր: Գլուխն իրենից ներկայացնում է թեմայի բաղադրիչներից մեկը, և անվանումը պետք է արտահայտի այդ ենթակայությունը:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է հիշել, որ աշխատանքը գլուխների և պարագրաֆների տրոհելը պետք է ծառայի թեմայի բացահայտմանը: Պլանի կետերը պետք է կառուցվածքային առումով լիովին բացահայտեն թեման: Այդ պատճառով պետք է պլանի մեջ մտցնել կառուցվածքային տարրեր, որոնք բովանդակային առումով դուրս են գալիս թեմայի սահմաններից կամ նրան միայն անուղղակիորեն են վերաբերում:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ

Աշխատանքի պլանը կազմելիս և աշխատանքը շարադրելիս պետք է նկատի ունենալ, որ այն պետք է կազմված լինի հետևյալ տարրերից՝

- 1) տիտղոսաթերթ՝ ըստ սահմանված նմուշի,
- 2) բովանդակություն,
- 3) ներածություն,
- 4) աշխատանքի բուն բովանդակություն (գլուխներ, պարագրաֆներ),
- 5) վերջաբան,
- 6) օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկ,
- 7) հավելվածներ՝ ըստ անհրաժեշտության:

**Տիտղոսաթերթը** աշխատանքի առաջին էջն է և կազմվում է հետևյալ նմուշին խիստ համապատասխան:

### Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի տիտղոսաթերթ

<b>ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</b> _____ ՍՄԲԻՈՆ	
<b>ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ / ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ</b>	
Չեղինակ՝ _____	
Թեմա՝ _____	
Ղեկավար՝ _____	
Հանձնված է՝ «__» _____ 201_ թ.	
Գրախոսված է՝ «__» _____ 201_ թ.	
<b>Թույլատրել պաշտպանության, ամբիոնի վարիչ՝</b> _____	
<b>Պարոն/ տիկին _____</b> խնդրում եմ գրախոսել Ղեկան, պրոֆեսոր _____	<b>Պաշտպանված է՝ «__» _____ 201_ թ.</b> <b>Գնահատականը՝ _____</b> <b>Պետական քննական հանձնաժողովի</b> <b>նախագահ՝ _____</b> _____
«__» _____ 201_ թ.	_____
ԵՐԵՎԱՆ - 201_	

**Բովանդակությունը**, ըստ էության, աշխատանքի վերջնական պլանն է: Դրանում ներկայացվում են աշխատանքի բոլոր վերնագրերը (բացի տեքստի հետ միասին տրված ենթավերնագրերից) և նշվում են այն էջերը, որոնցով նրանք սկսվում են: Վերնագրերը պետք է կրկնեն տեքստի համապատասխան հատվածների վերնագրերը: Տեքստի համեմատ դրանք կրճատել կամ փոփոխել չի թույլատրվում:

Բովանդակության օրինակ՝

<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
<b>ԳԼՈՒԽ I.</b> <b>ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ</b> <b>ՎՃՌԻ ԴԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ.....</b>	<b>6</b>
§1. <i>Շնդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ակտերի հասկացությունը և տեսակները.....</i>	6
§2. <i>Վճռի իրավական բնույթը (էությունը).....</i>	15
§3. <i>Վճռի տեսակները.....</i>	20
<b>ԳԼՈՒԽ II.</b> <b>ՎՃՌԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳԱՅԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՎՃՌԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....</b>	<b>31</b>
§1. <i>Վճռին ներկայացվող պահանջները.....</i>	31
§2. <i>Վճռի ձևը, կառուցվածքը և բովանդակությունը.....</i>	38
<b>ԳԼՈՒԽ III.</b> <b>ՎՃՌԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԸ.....</b>	<b>45</b>
§1. <i>Վճռի օրինական ուժի մեջ մտնելու հասկացությունը և ժամկետները.....</i>	45
§2. <i>Վճիռն օրինական ուժի մեջ մտնելու հետևանքները: Օրինական ուժի սուբյեկտիվ և օբյեկտիվ սահմանները.....</i>	50
<b>ԳԼՈՒԽ IV.</b> <b>ՎՃՌԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ ԱՅՆ ԿԱՅԱՑՆՈՂ</b> <b>ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՐՄԻՑ.....</b>	<b>60</b>
<b>ՎԵՐՋԱԲԱՆ.....</b>	<b>67</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ</b> <b>ԳՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ.....</b>	<b>70</b>

**Ներածությունն** աշխատանքի առավել պատասխանատու մասն է, քանի որ աշխատանքի մասին հակիրճ պատկերացում կազմվում է հենց դրա ուսումնասիրության արդյունքում: Ներածության շրջանակներում պետք է հիմնավորվի ընտրված թեմայի արդիականությունը:

Պետք է ներկայացվեն նաև թեմայի ուսումնասիրվածության վիճակը, աշխատանքը կատարելիս առաջադրված նպատակը և խնդիրները, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը:

**Թեմայի արդիականության հիմնավորումը** հաճախ զբաղեցնում է 2-3 էջ: Այն պետք է պարունակի բացատրություն, թե ինչու տվյալ թեմային պետք է անդրադառնալ հենց այժմ, որն է դրա անհրաժեշտությունը, ինչ վիճակում են տեսության և օրենսդրության զարգացման հիմնական միտումները:

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b>	
<p><b>Թեմայի արդիականությունը:</b> Դատական իշխանության մարմինների կողմից իրականացվող արդարադատության որակը մեծապես պայմանավորված է ընդհանուր իրավասության դատարանների կայացրած վճիռների որակով և կայունությամբ: Առաջին հերթին, դրանք են արտացոլում դատարանի՝ որպես քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելու համար լիազորված պետական (դատական) իշխանության մարմնի իրավակիրառ գործունեության մակարդակը, դրա համապատասխանությունը ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, այդ թվում նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով և ՄԻԵԴ-ի որոշումներով սահմանված սկզբունքներին ու ստանդարտներին: Դատական համակարգի առաջին օղակի վճիռների վերլուծության արդյունքներով է, որ կրելի է դատողություններ անել այն մասին, թե որքանով են ՀՀ օրենսդրությունը և դատական համակարգն ապահովում իրավունքի սուբյեկտների դատական պաշտպանության, արդար դատաքննության, արդյունավետ միջոցներով իրավունքի պաշտպանություն ստանալու սահմանադրական և միջազգային-իրավական հանրաճանաչ իրավունքները և դրանց իրականացման երաշխիքները:</p> <p>ՀՀ-ում իրականացված դատաիրավական բարեփոխումների արդյունքում կատարված և ներկայումս էլ առանձին օրինագծերով առաջարկվող փոփոխությունները և լրացումները, որոնք հաճախ ունեն հայեցակարգային բնույթ, օբյեկտիվ անհրաժեշտություն են դարձնում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների վճռի ինստիտուտի գիտական խորը իմաստավորումը, համակարգային բազմակողմանի վերլուծությունը և հետագա կատարելագործման ուղիների մշակումը:</p> <p>...</p> <p>Վերը շարադրվածով և մի շարք այլ հանգամանքներով էլ պայմանավորված են սույն մագիստրոսական թեզի թեմայի ընտրությունը և կատարված ուսումնասիրության արդիականությունը:</p> <p>...</p>	

Արդիականության հիմնավորմանը պետք է հաջորդի խնդրի *գիտական մշակվածությանը* վերաբերող բաժինը: Այդ բաժնում պետք է ցույց տալ, թե ինչ վիճակում են գտնվում հետազոտության առարկայի վերաբերյալ ժամանակակից գիտական պատկերացումները, թվարկել այն աշխատությունները, որոնց շրջանակներում անդրադարձ է կատարվել թեմային կամ դրա այս կամ այն տեսանկյուններին, նշել

թեմայի ոչ լիարժեք լուսաբանված կողմերը:

Այնուհետև անցում է կատարվում կոնկրետ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ՝ հեղինակի ստանձնած դերին: Պետք է հստակ ձևակերպել թեմայի ուսումնասիրության *նպատակը և խնդիրները*: Անհրաժեշտ է գիտենալ, որ թվարկված խնդիրներով են պայմանավորված աշխատանքի պլանը և ներքին տրամաբանությունը:

**Թեմայի ուսումնասիրության նպատակը և խնդիրները:** Մագիստրոսական աշխատանքը կատարելիս մեր առջև նպատակ ենք դրել ուսումնասիրել և համակարգային վերլուծության ենթարկել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից կայացվող վճռի ինստիտուտը, ԶԴՕ-ի ընդունումից հետո առ այսօր դրանում կատարված փոփոխություններն ու լրացումները և, ըստ հնարավորության, մշակել քաղաքացիական դատավարության օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Նշված նպատակին հասնելու համար սույն աշխատանքի շրջանակներում մեր կողմից առաջադրվել և հետևողականորեն իրենց լուծումն են գտել հետևյալ խնդիրները՝

- 1) վերլուծվել են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատական ակտերի հատկանիշները, կատարվել է դրանց դասակարգումը, ուսումնասիրվել և լուսաբանվել են գործն ըստ էության լուծող ակտերի իրավական բնույթը և նշանակությունը, վեր են հանվել առանձին վճռի տեսակները, որոնք, ըստ տարբեր չափանիշների, ենթարկվել են դասակարգման:
- 2) բացահայտվել է ՀՀ օրենսդրությամբ վճռին ներկայացվող պահանջների շրջանակը, դրանց բովանդակությունը՝ հաշվի առնելով դատավարագիտության մեջ հարցի վերաբերյալ ձևավորված տեսակետները:

...

6) վեր են հանվել վճռի ինստիտուտը կազմող նորմերում առկա թերություններն ու բացթողումները և կատարվել են դատավարական օրենսդրության կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ:

...

Ներածությունը եզրափակվում է աշխատանքի կառուցվածքային միավորների մասին հակիրճ տեղեկատվությամբ (օրինակ՝ հետևյալ բովանդակությամբ. *«Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնք ընդհանուր առմամբ բաժանված են ութ պարագրաֆների, վերջաբանից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից»*):

Կատարված հետազոտության **բուն բովանդակությունը** ներկայացվում է նախապես կազմված աշխատանքային պլանին խիստ համապատասխան շարադրված գլուխներում և պարագրաֆներում: Աշխատանքի այս հատվածում են լուսաբանվում թեմային վերաբերող հարցերը, վեր են հանվում տեսության մեջ և պրակտիկայում առկա

խնդիրները, այստեղ է կատարվում նշված խնդիրների իրավահամեմատական, պատմաիրավական, ինստիտուցիոնալ-համակարգային և այլ մեթոդների կիրառմամբ իրականացվող վերլուծությունը, ներկայացվում են այս կամ այն հարցի վերաբերյալ տարբեր հեղինակների կարծիքները, շարադրվում և հիմնավորվում են սեփական դատողությունները, մոտեցումները և եզրահանգումները, ձևակերպվում են օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունները: Տեսական աղբյուրներից օգտվելիս և հեղինակների կարծիքները շարադրելիս, պետք է ներկայացվեն խնդրի առարկայի վերաբերյալ արտահայտված հիմնական տեսակետները, այդ թվում՝ միմյանց հակասողները: Երևույթի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելիս անհրաժեշտ է պահպանել դրա զարգացման ժամանակագրությունը, այն է՝ սկզբում ներկայացնել դրա վիճակն անցյալում, ապա քննարկել ներկայումս առկա վիճակը, հետո անդրադառնալ ապագայում ակնկալվող զարգացմանը:

Շարադրանքի քննարկվող հատվածը պետք է լիովին արտացոլի կատարված ուսումնասիրության ողջ ընթացքը և արդյունքները:

Յուրաքանչյուր գլուխ շարադրվում է նոր էջից: Պարագրաֆները պետք է հաջորդեն մեկը մյուսին և նոր էջից չեն սկսվում: Գլուխների և պարագրաֆների վերնագրում և համարակալում կատարվում է վերը նշված կանոններով (տես՝ սույն ուղեցույցի նախորդ հատվածը):

Աշխատանքի **վերջաբանում** պետք է ամփոփվեն այն հետևություններն ու առաջարկությունները, որոնք կատարվել են թեմայի ուսումնասիրության արդյունքում և ներկայացվում են պաշտպանության: Այդ մասն ունի կարևոր նշանակություն, քանի որ նրանում է, որ պետք է հակիրճ արտացոլված լինեն աշխատանքի պտուղները:

Աշխատանքի շարադրանքը պետք է ավարտվի **օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի մատենագիտական ցանկով**: Դա աշխատանքի ընթացքում օգտագործված տարբեր հեղինակների աշխատությունների և այլ աղբյուրների ցանկն է: Այդ ցանկում նշված յուրաքանչյուր աղբյուր այս կամ այն ձևով պետք է արտացոլված լինի աշխատանքի մեջ:

Ցանկը կազմելիս **«Նորմատիվ իրավական ակտեր»** ենթավերնագրի ներքո համարակալված թվարկմամբ, ըստ իրավաբանական ուժի նվազման և կարևորության, նշվում են իրավական ակտերը՝ դրանց ընդունման, ուժը կորցնելու (եթե ակտը գործող չէ) և հրապարակման սկզբնաղբյուրի վերաբերյալ նշումներով: Օրինակ՝

Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ փոփոխություններով և լրացումներով (2005):
2. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք (21.02.2007), ՀՀՊՏ 2007/20(544), 18.04.2007:
3. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք (28.11.2007), ՀՀՊՏ 2007/64 (588), 19.12.2007:
4. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք (05.05.1998), ՀՀՊՏ 1998/12(45), 15.06.1998:
5. ...
6. ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2007 թ. թիվ ՍԴՈ-690 որոշումը, Սահմանադրական դատարանի պաշտոնական կայք՝ [www.concourt.am](http://www.concourt.am):
7. ...

«Օգտագործված գրականություն» ենթավերնագրի ներքո համարակալված թվարկմամբ այբբենական կարգով նշվում են նախ՝ հայերեն, այնուհետև՝ օտարալեզու աղբյուրները: Օրինակ՝

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, **Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի խմբ.**, Եր., «Իրավունք» հրատ., 2010:
2. Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները, **Գ.Ս. Ղազինյանի խմբ.**, Եր., ԵՊՀ հրատ., 2009:
3. **Հովհաննիսյան Վ.Վ.**, Իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևը, ԵՊՀ հրատ., Եր., 2008:
4. **Մանուկյան Հ.**, Դատաիրավական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում. անցյալի դասերը և ապագայի հեռանկարները, «Օրենք և իշխանություն», 2001, թիվ 8:
5. **Безруков А.М.** Преюдициальная связь судебных актов. - М.: «Волтерс Клувер», 2010.
6. **Васильев С.В.** Гражданский процесс. - Харьков: «Одиссей», 2007.
7. ...

«Պրակտիկայի նյութեր» ենթավերնագրի ներքո համարակալված թվարկմամբ, ըստ կարևորության, նշվում են տեղեկություններ աշխատանքում օգտագործված պրակտիկ նյութերի մասին՝ այն աղբյուրների վկայակոչմամբ, որտեղից կարելի է դրանց ծանոթանալ: Օրինակ՝

Պրակտիկայի նյութեր

1. ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից վճարման կարգադրություն արձակելու վարույթների ընթացքի մասին 2006 և 2007 թթ. հաշվետվությունները, Դատական իշխանության պաշտոնական կայք՝ [www.court.am](http://www.court.am):
2. Ստարուչիկն ընդդեմ Լեհաստանի գործով ՄԻԵԴ-ի 22.03.2007 թ. վճիռը, «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ժողովածու», Գիրք VI, Եր., «Անտարես» հրատ., 2008, էջ 124-165:
3. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-2504/ՏԴ քաղ. գործով 2006 թ. դեկտեմբերի 21-ի որոշումը, «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի (սեպտեմբեր-դեկտեմբեր 2006)», Հատոր I, Եր., 2007, էջ 469-472:
4. ...

**Ծանոթություն.** ուշադրություն դարձրեք ներկայացված օրինակներում առաջարկվող ձևավորման, դրանցում օգտագործված կետադրական և հատուկ նշանների կիրառման կանոններին:

Աշխատանքը կարող է ունենալ **հավելվածներ**՝ հեղինակի կողմից մշակված փաստաթղթեր, օրենքի կամ դրա մասերի նախագծեր, աղյուսակներ, գրաֆիկներ, սխեմաներ, որոնք աշխատանքի բուն տեքստում զետեղելը զանազան պատճառներով համարվել է աննպատակահարմար:

Յուրաքանչյուր հավելված պետք է սկսվի նոր էջից, և էջի վերին մասում պետք է նշված լինի «ՀԱՎԵԼՎԱԾ» բառը և ունենա իր վերնագիրը: Մի քանի հավելվածների առկայության դեպքում դրանք համարակալվում են արաբական թվանշաններով, օրինակ՝ «ՀԱՎԵԼՎԱԾ 1», «ՀԱՎԵԼՎԱԾ 2» և այլն: Հիմնական տեքստի և հավելվածների միջև կապն իրականացվում է հղումների միջոցով (*օրինակ՝ տե՛ս Հավելված 1-ը*):

**5. ԸՄՐԱԴՐԱՆՔԻ ՈՃԸ**

Ավարտական և մագիստրոսական աշխատանքները սովորաբար ընթերցվում են տարբեր մարդկանց կողմից, ուստի էական նշանակություն ունի նյութի մատուցման և արտացոլման ձևը: Գրագետ գրական լեզուն իսկական առավելություն է և ի վիճակի է ընդգծելու աշխատանքի առավելություններն ու քողարկելու թերությունները: Իր

հերթին չհաջողված, անփույթ և ոչ գրագետ լեզուն, առավել ևս այն դեպքերում, երբ տեքստում առկա են ուղղագրական և կետադրական սխալներ, կարող են թյուր պատկերացում ստեղծել նույնիսկ ամենահաջողված աշխատանքի վերաբերյալ:

Աշխատանքը վերջնական տեսքով պետք է ներկայացվի մաքուր և կոկիկ, առանց տառասխալների: Խառնաշփոթ աշխատանքն արդեն իսկ խոսում է համապատասխան բովանդակության մասին:

Ուսանողը պարտավոր է խորությամբ ուսումնասիրել իր ընտրած թեման, ընկալել նրա էությունը, շարադրանքի ընթացքում բացահայտել թեմայի տեսական և գործնական նշանակությունը, օրենսդրական կարգավորվածության առանձնահատկությունները, այս կամ այն հարցի վերաբերյալ գիտնականների կողմից արտահայտված կարծիքները և ձևավորված պրակտիկան: Անհրաժեշտ է խնդրո առարկայի վերաբերյալ ներկայացնել նաև ՀՀ սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերը և դրանցում ձևակերպված իրավական դիրքորոշումները: Ցանկալի է, որ հարցերի վերլուծության համար օգտագործվեն պրակտիկայից վերցրած օրինակներ, առանձին դատական ատյանների դատական ակտեր, վիճակագրական և գործնական նշանակություն ունեցող այլ տեղեկություններ, ինչը թույլ կտա վեր հանել գործնականում առկա խնդիրները: Թեմայի վերաբերյալ տեսաբանների, իրավակիրառ մարմինների հակադիր դիրքորոշումների քննարկումն օգնում է բազմակողմանիորեն բացահայտելու առկա խնդիրները, վեր հանելու առաջարկվող լուծումները, ինչպես նաև հաշվի առնելու այն դիտողություններն ու առաջարկությունները, որոնք կարող են ծագել թերահավատ ընթերցողի մտքում:

Աշխատանքը շարադրելիս ուսանողը չպետք է սահմանափակվի գրականության և իրավական ակտերի բովանդակության պարզ վերարտադրմամբ: Նա պետք է ցուցաբերի իր վերաբերմունքն ուսումնասիրվող թեմայի վիճելի հարցերի նկատմամբ, փորձի մեկնաբանել իրավական նորմերը, համեմատական վերլուծությունների հիման վրա ձևակերպել սեփական մտքերը, դատողությունները, առաջարկներն ու եզրակացությունները: Վերջիններս պետք է լինեն հիմնավորված, իսկ թեմայի կամ դրա առանձին հարցերի ուսումնասիրման և վերլուծությունների արդյունքում մշակված՝ օրենսդրության և նրա գործնական կիրառման կառուցակարգերի մասին առաջարկները՝ հստակ ձևակերպված:

Ուսանողը պարտավոր է ապահովել աշխատանքի գիտական ապարատը: Աշխատանքում պետք է հստակ տարանջատվեն սեփական և փոխառված մտքերը: Այլ հեղինակից վերցված մտքերի, մեջբերումների աղբյուրը պետք է նշվի աշխատանքի՝ այդ միտքը պարունակող էջի տողատակում՝ սահմանված կանոններով հղումներ կատարելու միջոցով (տե՛ս մեջբերումներ և հղումներ կատարելու կարգը):

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել շարադրման տրամաբանությանը և աշխատանքի ձևավորմանը (տե՛ս աշխատանքի ձևավորման կանոնները):

Աշխատանքը շարադրվում է անդեմ մենախոսության ձևով: Այն պետք է զուրկ լինի հուզական և սուբյեկտիվ երանգավորումից, արտահայտված մտքերը պետք է ընկալվեն միանշանակ, ապահովեն հուզական չեզոքություն:

Ընդունված չէ օգտագործել առաջին դեմքի եզակի թվով դերանուններ («ես», «իմ»): Առավել հաճախ հեղինակի տեսակետն արտահայտվում է «մենք», «մեր» դերանուններով: Անհրաժեշտ է գրել «մեր կողմից ուսումնասիրվել է», «մենք գալիս ենք այն համոզման», «մեր կարծիքով» և այլն: Նման ձևակերպումներն արդեն իսկ որոշակի կարծիք են ստեղծում, որ հեղինակն ունի համախոհներ (գիտական ղեկավարը, այլ մասնագետներ):

Ծիշտ և լավ գրելը նույնքան բարդ ու կարևոր է, որքան աշխատանքն ուրվագծելը, իսկ լավ գրելու համար հարկավոր է մտքերը ձևակերպել հստակ: Խոսքի հստակությունն ու պարզությունը պետք է լինեն աշխատանքի հիմնական սկզբունքներից մեկը:

Անհրաժեշտ է խուսափել անհարկի կրկնություններից: Խորհուրդ է տրվում աշխատանքը կենտրոնացնել մեկ կամ մի քանի շաղկապված եզրակացությունների հասնելու, հիմնական հետազոտական թեման հստակորեն առանձնացնելու և արդյունքներն ամփոփելու վրա:

Անհրաժեշտ է հետևել տեքստը պարզ շարադրելու սկզբունքին: Ցանկալի է գրել պարզ, համառոտ նախադասություններով: Երկարաշունչ նախադասությունները դժվարընկալելի են և կարող են կրկնությունների, ավելորդաբանությունների ու հակասությունների տեղիք տալ: Եթե կան նմանատիպ նախադասություններ, հարկավոր է, որքան էլ դժվար լինի, վերաշարադրել դրանք:

Ասելիքը հարկավոր է ուրվագծել: Դա օգնում է մտքի հետևողականությանը, կապակցվածությանը և դյուրընթեռնելիությանը:

Աշխատանքին առաջադրվող պահանջներից մեկն էլ հակիրճու-



թյունն է: Դա, սակայն, չի նշանակում, որ տեքստը պետք է լինի համառոտ, վերլուծությունը՝ մակերեսային: Տեքստում չպետք լինեն իմաստային առումով միմյանց հետ չփոխկապակցված և կրկնվող բառեր, նախադասություններ, մեջբերումներ, անտեղի օգտագործված տերմիններ և այլն:

Միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները: Տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով:

Պետք է նկատի ունենալ, որ օտարերկրյա կազմակերպությունների անվանումները, ֆիզիկական անձանց անունները, աշխարհագրական օբյեկտների անունները, դրանց հապավումները, ինչպես նաև թարգմանության ոչ ենթակա իրավական, ֆինանսական, տեխնիկական և այլ տերմինները պետք է գրվեն հայերեն տառադարձությամբ: Առանձին դեպքերում հայերեն հապավումների և (կամ) տերմինների հետ միաժամանակ՝ փակագծերում, կարող են կիրառվել միջազգային ճանաչում ստացած կամ ընդունված լատիներեն կամ անգլերեն հապավումներ և (կամ) տերմիններ:

## **6. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

Ցանկացած աշխատանք կատարելիս գրագողության դրսևորումներից զերծ մնալու և տվյալների հավաստիությունն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջանում տարբեր հեղինակների աշխատություններից և իրավական ակտերից կատարելու մեջբերումներ և համապատասխան հղումներ: Գրագողություն է առկա այն դեպքերում, երբ աշխատանքում օգտագործվում են այլ հեղինակի մտքերն ու գաղափարները՝ առանց համապատասխան հղում կատարելու:

Մեջբերումները և հղումները կատարելիս հարկավոր է պահպանել մի շարք ձևական կանոններ:

**Մեջբերումներ գրականությունից:** Մեջբերումների ձևակերպման ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները:

1) Մեջբերումը կարելի է կատարել ուղղակի խոսքի շարադրման կանոնների պահպանմամբ: Մեջբերվող ուղղակի խոսքը (քաղվածքը) տրվում է չակերտների մեջ՝ առանց փոփոխության:

*Օրինակ՝ Ն.Ա. Գրոմոշինան գրում է. «Դատական հրամանը, վճռի*

*հետ շատ ընդհանրություններ ունենալով հանդերձ, նրա տարատեսակ չի հանդիսանում»:* «Դատական հրամանը,– գրում է Ն.Ա. Գրոմոշինան,– վճռի հետ շատ ընդհանրություններ ունենալով հանդերձ, նրա տարատեսակ չի հանդիսանում»: *«Դատական հրամանը, վճռի հետ շատ ընդհանրություններ ունենալով հանդերձ, նրա տարատեսակ չի հանդիսանում»,– գրում է Ն.Ա. Գրոմոշինան:*

2) Մեջբերումը կարելի է մտցնել հեղինակային տեքստի նախադասության մեջ՝ որպես վերջինիս մաս: Տվյալ դեպքում, եթե մեջբերվող միտքը բառացի չի կրկնվում, չակերտներ չեն օգտագործվում: Եթե այն կրկնվում է բառացի, ապա տրվում է չակերտների մեջ:

*Օրինակ՝ Ն.Ա. Գրոմոշինայի բնորոշմամբ՝ հրամայական վարույթը դատարանի իրավակիրառական գործունեություն է: Ըստ հեղինակի՝ «այն դժվար է բնորոշել որպես դատավարության տեսակ»:*

3) Եթե մեջբերման աղբյուրից բառացի վերարտադրվում է միայն նախադասության մի մասը, ապա բաց թողնված մասի փոխարեն դրվում է բազմակետ, իսկ մեջբերումը տրվում է չակերտներում:

*Օրինակ՝ Ս.Վ. Հարությունյանը նշում է. «Վճիռն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող այն դատական ակտն է, որով ըստ էության լուծվում է գործը...»:* Ըստ Ս.Վ. Հարությունյանի՝ «վճիռն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող այն դատական ակտն է, որով... հաստատվում են վիճելի իրավահարաբերության, վիճելի իրավունքի, վիճելի պարտականության առկայությունը կամ բացակայությունը...»: *Ինչպես նշում է Ս.Վ. Հարությունյանը, «...վճարման կարգադրությունը ըստ էության չի տարբերվում գործը լուծող դատական ակտերից»:*

Անթույլատրելի է տեքստի միտումնավոր կրճատումը կամ այնպիսի բառի, արտահայտության, պարբերության բացթողումը, որն աննշան չափով անգամ կարող է աղավաղել հեղինակային խոսքը, ցանկալի չէ նաև ուղղագրության փոփոխությունը (դասականը նորով կամ հակառակը):

Յուրաքանչյուր բառի, տողի, բառակապակցության, նախադասության կամ պարբերության բացթողում պետք է արտացոլվի, այդպիսի բացթողումները, ինչպես վերը նշվեց, պետք է նշվեն բազմակետերով:

4) Եթե մեջբերվող աշխատությունը ունի երկու հեղինակ, ապա պետք է նշվեն երկու հեղինակների անուններն էլ:

*Օրինակ՝ Վ.Ն. Կուրդյավցևը և Վ.Ե. Էմինովը նշում են, որ «որքան բարձր է հասարակության տնտեսական, տեխնիկական, մշակութային զարգացման մակարդակը, այնքան ավելի շատ հիմքեր կան կարծելու, որ նման հասարակությունում հանցավորության մակարդակն ավելի*

ցածր է, քան տնտեսական, սոցիալ-քաղաքական անկայունությամբ բնութագրվող հասարակությունում»:

5) Եթե մեջբերվող աշխատությունն ունի երեք և ավելի հեղինակներ, ապա մեջբերում կարարելիս նշվում է առաջին հեղինակի ազգանունը, որից հետո օգտագործվում է «և համահեղինակները» արտահայտությունը:

*Օրինակ՝ Յու.Մ. Անտոնյանը և համահեղինակները նշում են. «Վերջին տարիներին հանցավորի անձի էմպիրիկ հետազոտությունների արդյունքները վկայում են, որ օրինապահ անձանց համեմատ նրանք ունեն որոշակի տարբերակիչ, այդ թվում՝ հոգեբանական առանձնահատկություններ»:*

6) Օտար լեզվով բնագրից կատարվող մեջբերումները տրվում են թարգմանաբար հայերենով:

7) Մի քաղվածքում չի կարելի տալ առանձին հատվածներ տարբեր էջերից, նույնիսկ եթե դրանք մտքով կամ տրամաբանորեն իրար հետ կապված են: Ամեն մի այդպիսի մեջբերում պետք է ձևակերպվի իբրև առանձին հղում:

8) Բոլոր մեջբերումները պետք է ուղեկցվեն աղբյուրի նշումով: Հղումը տրվում է տողատակում:

**Մեջբերումներ իրավական ակտերից:** Իրավական ակտերից մեջբերումների ձևակերպման ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները:

1) Առաջին անգամ աշխատանքում իրավական ակտի մասին հիշատակելիս տեքստում անհրաժեշտ է ցույց տալ նրա լրիվ անվանումը (*օրինակ՝ «Ղատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք*)՝ տողատակում ցույց տալով դրա վերաբերյալ սպառիչ տեղեկատվությունը, այն է՝ ակտի ընդունման և ուժի մեջ մտնելու տարին, ամիսը, ամսաթիվը, հրապարակման սկզբնաղբյուրը և ամսաթիվը (*օրինակ՝ Ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998/12(45), 15.06.1998*):

Պետք է նկատի ունենալ.

- Առաջին անգամ աշխատանքում իրավական ակտի մասին հիշատակելիս այն որևէ եղանակով կրճատել կամ ձևափոխել չի թույլատրվում:

- Օրենսգրքի անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են «Հայաստանի Հանրապետության» բառերը (առանց չափերտների) և օրենսգրքի վերնագիրը (առանց

չափերտների): Օրինակ՝ *Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք:*

- Օրենքի անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը (չափերտներում), «Հայաստանի Հանրապետության օրենք» բառերը (առանց չափերտների): Օրինակ՝ *«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:*

- Իրավական այլ ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են իրավական ակտի ընդունող մարմնի անվանումը, իրավական ակտի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը (չափերտներում), «թիվ» բառը և ակտի հերթական համարը, ակտի տեսակը (հրամանագիր, որոշում, հրաման և այլն): Օրինակ՝ *Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. դեկտեմբերի 19-ի «Ոստիկանությունում առողջության համար վնասակար պայմաններում ծառայողներին աշխատաժամանակի կրճատ տևողություն և լրացուցիչ արձակուրդի տևողություն նախատեսող ծառայությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 2038-Ն որոշումը:*

Հետագա շարադրանքում իրավական ակտի ընդունված կրճատ տարբերակը կիրառելու ցանկության դեպքում, տողատակում նշում է կատարվում նաև այդ մասին (*օրինակ՝ Այսուհետ՝ ԴԱՀԿ մասին օրենք*):

Գիտական գրականության մեջ ընդունված է, օրինակ, հետևյալ կրճատ անվանումների օգտագործումը՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք - ՀՀ ԴՕ, ԴՕ, ՀՀ դատ. օր., Դատ. օր., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք - ՀՀ ԶԴՕ, ԶԴՕ, ՀՀ քաղ. դատ. օր., Զաղ. դատ. օր., Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք - ՀՀ ՎԴՕ, ՎԴՕ, ՀՀ վարչ. դատ. օր., Վարչ. դատ. օր., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք - ՀՀ քր. դատ. օր., Զր. դատ. օր., Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք - ՎԻՎՕ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք - ՀՀ քաղ. օր., Զաղ. օր., Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք - ՀՀ ԸՕ, ԸՕ և այլն:

**Ծանոթություն.** ուշադրություն դարձրեք հապավումներին, կրճատման եղանակներին և մեծատառերի գործածությանը:

Օրենքների անվանումները կարող են կրճատվել հապավումների

օգտագործմամբ, *օրինակ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենք - ԴԱՀԿԿԾՄ օրենք կամ ԴԱՀԿԿԾ մասին օրենք:*

Պետք է նկատի ունենալ, որ հապավումների կիրառումը ցանկալի է, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտություն է առաջա-  
նում հաճախակի վկայակոչել միևնույն օրենքի բավականին երկար անվանումը:

Այլ իրավական ակտերի անվանումները չեն կրճատվում, թեև թույլ-  
լատրվում է օգտագործել «նշված որոշումը», «նշված կարգը» կամ նմանատիպ այլ նշագրումներ, եթե տվյալ գլխի, պարագրաֆի շրջա-  
նակներում հնարավոր է ճշգրիտ որոշել, թե որ ակտի մասին է խոսքը: Բնականաբար, եթե նախորդ շարադրանքում հիշատակվել են մեկից ավելի այլ իրավական ակտեր, դրանց յուրաքանչյուր հաջորդ հիշա-  
տակման դեպքում պետք է առնվազն նշվեն իրավական ակտն ընդու-  
նող մարմնի անվանումը և ակտի համարը (*օրինակ՝ Կառավարության թիվ 1245-Ն որոշումը, ԴՆՆ թիվ 81 որոշումը և այլն*):

2) Մեջբերումները, որպես կանոն, կատարվում են «ըստ», «համա-  
ձայն» բառերի, «ինչպես սահմանվում է», «օրենսդիրն ամրագրել է կանոն այն մասին, որ» և նմանատիպ այլ արտահայտությունների օգ-  
տագործմամբ: Օրինակներ՝

*Ըստ ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:*

*ՔԴՕ 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դռնբաց է:*

*Ինչպես սահմանվում է Քաղ. օր. 3-րդ հոդվածի 3-րդ մասով, ապրանքները, ծառայությունները և ֆինանսական միջոցները Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում տեղաշարժվում են ազատորեն:*

3) Իրավական ակտից մեջբերում կատարելիս նշվում են ակտի լրիվ կամ կրճատ անվանումը, տվյալ իրավական ակտի այն հոդվածը, մասը, կետը և պարբերությունը, որում ամրագրված է համապատասխան իրավական նորմը: Օրինակներ՝

*Ըստ ՔԴՕ 132 հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության՝ վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները:*

*ՔԴՕ 87 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ հայցադիմու-  
մում պետք է նշվեն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցա-  
պահանջները:*

4) Իրավական ակտի լրիվ կամ կրճատ անվանումը, տվյալ իրավա-  
կան ակտի այն հոդվածը, մասը, կետը և պարբերությունը, որում ամ-  
րագրված է համապատասխան իրավական նորմը կարող են վկայա-  
կոչվել վերը նշված ձևով կա՛մ իրավական նորմը, կա՛մ դրա վերաբե-  
րելի մասը շարադրելուց հետո՝ փակագծերում: Օրինակներ՝

*Գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռ-  
նարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և  
լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի  
կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգաման-  
քից (Քաղ. օր. 7 հոդվ., մաս 1):*

*Հանցագործությունների համակցություն է համարվում Քր. օր-ով  
(տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի  
միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու  
կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը  
դատապարտված չի եղել (Քր. օր. 20 հոդվ., մաս 1, կետ 1):*

**Ծանոթություն.** ուշադրություն դարձրեք փակագծերում կատարված կրճատումներին և կետադրությանը:

5) Իրավական ակտից մեջբերում կատարելիս պետք է դրա առանձին հոդվածները վերարտադրել լրիվ ծավալով: Կարող է վերար-  
տադրվել միայն հոդվածի՝ տվյալ շարադրանքին վերաբերելի մասը:

6) Մեջբերվող նորմերը կամ դրանց մասերը, որպես կանոն, չա-  
կերտներում չեն գրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրա-  
ժեշտություն կա ընդգծելու, որ օրենսդրության տվյալ դրույթը մեջբե-  
րվում է բառացիորեն: Օրինակ՝

*ՔԴՕ 207 հոդվածի 7-րդ մասում օգտագործված «հիմնարար խախ-  
տումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է  
արդարադատության բուն էությունը» ձևակերպումն այնքան էլ հաջող-  
ված չի թվում:*

7) Սահմանադրական դատարանի որոշումներից մեջբերումներ կա-  
տարելիս նշվում են որոշման ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և  
որոշման համարը (*օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանի  
09.04.2007 թ. թիվ ՍԴՈ-690 որոշման համաձայն...*):

Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից մեջբերումներ  
կատարելիս նշվում են որոշման ընդունման տարին, ամիսը, ամսաթի-  
վը և գործի համարը (*օրինակ՝ ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ*

ՎԴ/0292/05/08 վարչական գործով 2008 թ. հոկտեմբերի 31-ի որոշման...):

ՄԻԵԴ-ի վճիռներից մեջբերումներ կատարելիս նշվում են տեղեկություններ գործի մասին, համապատասխան ակտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ինչպես նաև այն կետը, որը պարունակում է ՄԻԵԴ-ի համապատասխան մեկնաբանությունները (օրինակ՝ *Բուրդուվն ընդդեմ Ռուսաստանի գործով ՄԻԵԴ-ի 07.05.2002 թ. վճիռի 5-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն...*):

**Հղումներ** կատարվում են տողատակերում՝

- գրականությունից մեջբերումներ կատարելիս,
- հարցին վերաբերող այլ աղբյուրներ ցույց տալու անհրաժեշտության դեպքում,
- պրակտիկայի նյութեր վկայակոչելիս,
- շարադրանքի այլ մասերը վկայակոչելիս:

Հղում կատարելիս տողատակում նշվում են հետևյալ տեղեկությունները:

**I. Մեկ հեղինակ ունեցող աշխատություններին հղում կատարելու դեպքում** նշվում են՝

«Տե՛ս» բառը (առանց չափերտների, շեշտով, առանց բուրբի և ստորակետի), հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան առաջին տառերը, աշխատության լրիվ անվանումը, հրատարակության հերթական համարը (եթե տվյալ հրատարակությունն առաջինը չէ), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման տարեթիվը և է-ջը, որտեղ շարադրված է մեջբերվող կամ վկայակոչվող միտքը: Ոչ մի դեպքում չի թույլատրվում հեղինակի ազգանվան կամ աշխատության վերնագրի համառոտագրում:

Եթե աղբյուրն օտար լեզվով է, ապա հղումը սկսվում է «Տե՛ս» բառով, աղբյուրի տվյալները շարադրվում են աղբյուրի լեզվով, էջը նշվում է հայերենով, իսկ հղումն ավարտվում է հայերենի վերջակետով:

*Օրինակ՝*

<sup>1</sup> Տե՛ս **Օհալյան Լ. Պ.**, Կրիմինալիստիկա - 2-րդ հրատ., Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 10:

<sup>2</sup> Տե՛ս **Գրքսուչ Մ.Ա.** *Учение об иске (состав, виды)*. - М.: «ВЮЗИ», 1981, էջ 18-19:

**Ծանոթություն.** այստեղ և հետայսու ուշադրություն դարձրեք հղումների ձևավորման, դրանցում օգտագործված կետադրական և հատուկ նշանների կիրառման կանոններին:

**II. Հեղինակային խմբի կողմից կատարված աշխատություններին հղում** կատարելիս նշվում են՝

«Տե՛ս» բառը, աշխատության լրիվ անվանումը, խմբագրի անվան, հայրանվան առաջին տառերը և ազգանունը, հրատարակության հերթական համարը (եթե տվյալ հրատարակությունն առաջինը չէ), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման տարեթիվը և էջը, որտեղ շարադրված է մեջբերվող կամ վկայակոչվող միտքը (մտքերը):

*Օրինակ՝*

<sup>1</sup> Տե՛ս **Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի խմբ.**, Եր., «Իրավունք» հրատ., 2010, էջ 111:

<sup>2</sup> Տե՛ս **Гражданский процесс. Под ред. В.В. Яркова.** - 8-е изд., - М.: «Информотропик Медиа», 2012, էջ 17-18:

**III. Պարբերական մամուլում (գիտական հանդեսում, ամսագրում) հրատարակված գիտական հոդվածին հղում** կատարելիս նշվում են՝

«Տե՛ս» բառը, հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան առաջին տառերը, հոդվածի լրիվ անվանումը, գիտական հանդեսի, ամսագրի անվանումը, հրատարակման վայրը, հրատարակման տարեթիվը, հերթական համարը և էջը, որտեղ շարադրված է մեջբերվող կամ վկայակոչվող միտքը (մտքերը):

Հայերեն պարբերականում հրատարակված աշխատանքին հղում կատարելիս, պարբերականի անվանումը գրվում է չափերտներում: Օտարալեզու պարբերականում հրատարակված աշխատանքին հղում կատարելիս աշխատանքի վերնագիրը տալուց հետո դրվում է «//» նշանը, որից հետո տրվում է պարբերականի անվանումը՝ առանց չափերտների:

*Օրինակ՝*

<sup>1</sup> Տե՛ս **Փարուզյան Ա. Հ.**, *Հայաստանի Հանրապետության քրեական գործող օրենսգրքի արդի վիճակը և զարգացման հեռանկարները*, «Պետություն և իրավունք», Եր., 2011, թիվ 2(52), էջ 15:

<sup>2</sup> Տե՛ս **Громошина Н.А.** *Упрощение процесса: все ли сделано правильно? // Научные труды МГЮА.* - М., 2004, № 1, էջ 7:

**IV. Հոդվածների կամ այլ աշխատությունների ժողովածուներում հրատարակված գիտական հոդվածին կամ այլ աշխատությանը հղում** կատարելիս նշվում են՝

«Տե՛ս» բառը, հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան առաջին տառերը, աշխատության լրիվ անվանումը, ժողովածուի անվանումը

մը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման տարեթիվը և էջը, որտեղ շարադրված է մեջբերվող կամ վկայակոչվող միտքը (մտքերը):

*Օրինակ՝*

<sup>1</sup> *Տե՛ս Դիբանդյան Ս.Ա., Անմեղության կանխավարկածը որպես արդար դատաքննության իրավունքի ապահովման երաշխիք քրեական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 75-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., էջ 20-21:*

<sup>2</sup> *Տե՛ս Մեզրյան Ս.Գ. Право на эффективные средства защиты и проблема правовых последствий судебного акта по делам об оспаривании правомерности нормативно-правового акта // Всеобщая декларация прав человека и право каждого человека на справедливый, независимый и беспристрастный суд. Сборник материалов международной научно-практической конференции, посвященной 60-летию принятия Всеобщей декларации прав человека. - Ер.: «Тигран Мец», 2008, էջ 837:*

#### **V. Դեռևս պաշտոնապես չհրատարակված աղբյուրին (այդ թվում՝ ատենախոսություններին և դասախոսության տեքստերին) հղումներ կատարելիս** նշվում են՝

«Տե՛ս» բառը, հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան առաջին տառերը, աշխատության լրիվ անվանումը, աշխատության տեսակը, տարեթիվը և էջը, որտեղ շարադրված է մեջբերվող կամ վկայակոչվող միտքը (մտքերը):

Եթե մեջբերում է կատարվում դեռևս չհրատարակված դասախոսությունների տեքստից, ապա հղում կատարելիս պետք է նշել նաև «չհրատարակված աշխատություն» արտահայտությունը:

*Օրինակ՝*

<sup>1</sup> *Տե՛ս Գաբրիելյան Ս.Ա., Հանցավորության միտումները Հայաստանի Հանրապետությունում անցումային ժամանակաշրջանում, իրավ. գիտ. դոկտորի ... ատենախոսություն, Եր., 2009, էջ 156:*

<sup>2</sup> *Տե՛ս Нехова Е.А. Роль презумпций и фикций в распределении обязанностей по доказыванию. Дисс... к.ю.н. - Саратов, СГУ, 2006, էջ 77:*

<sup>3</sup> *Տե՛ս Մարգարյան Ա.Ռ., Վիկտիմոլոգիա, դասախոսությունների տեքստ, չհրատարակված աշխատություն:*

#### **VI. Համազանցից ստացված աղբյուրներին հղում կատարելու դեպքում** նշվում են՝

«Տե՛ս» բառը, հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան առաջին տառերը, աշխատության լրիվ անվանումը, եթե հնարավոր է պարզել նաև՝ հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման տարեթիվը, ամսագրի համարը, ինչպես նաև ինտերնետային հասցեն, որը պետք է նույնությամբ վերարտադրվի համապատասխան բրաուզերի հասցեի տողից:

*Օրինակ՝*

<sup>1</sup> *Տե՛ս Аумлеев Ш.В. Классификация незаконной деятельности защитника в процессе обеспечения интересов подозреваемого (обвиняемого) и подсудимого // Общество и право, 2010, № 2, [http://www.juristlib.ru/book\\_10408.html](http://www.juristlib.ru/book_10408.html)*

<sup>2</sup> *Տե՛ս Вышинский А.Я. Вопросы международного права и международной политики. - М., 1951, [http://www.juristlib.ru/book\\_7612.html](http://www.juristlib.ru/book_7612.html)*

**Ծանոթություն.** չի թույլատրվում հղումներ կատարել այնպիսի նյութերի, որոնց հեղինակը հայտնի չէ, բացառությամբ այն նյութերի, որոնք գտնված են պետական մարմինների, միջազգային կամ այլ կազմակերպությունների պաշտոնական կայքերում:

Համացանցային նյութերից օգտվելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դրանց հավաստիությանը, ուստի էլեկտրոնային նյութերի լավագույն աղբյուրը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գրադարանին հասանելի online ցանցերն են: Դրանք մուտք գործելու համար անհրաժեշտ ծածկագիրը կարող եք ստանալ՝ դիմելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գրադարան:

Online աղբյուրներին հղում կատարելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանց բովանդակությունը կարող է փոփոխվել, ուստի նման աղբյուրի հղում կատարելիս անհրաժեշտ է նշել նաև աղբյուրից օգտվելու օրը:

*Օրինակ՝ <http://moj.am/article/698> (06.05.2013)*

**VII. Զննարկվող հարցին վերաբերող մի քանի աղբյուրներ ցույց տալու անհրաժեշտության դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ պետք է նշել, որ տեքստում շարադրված միտքն արտահայտվում կամ հաստատվում է այլ աղբյուրներում,** օգտագործվում են «Տե՛ս մասնավորապես՝», «Տե՛ս, օրինակ՝», «Տե՛ս նաև՝» նշագրումները: Հարցի՝ թեմայի շրջանակներից դուրս ելող ասպեկտներին ընթերցողի ուշադրությունը հրավիրելու և դրանց քաջածանոթ լինելու հանգամանքն

ընդգծելու համար օգտագործվում է «Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս» նշագրումը:

*Օրինակ՝*

<sup>1</sup> *Տե՛ս մասնավորապես՝ Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920), Եր., 2012, էջ 41:*

<sup>2</sup> *Տե՛ս, օրինակ՝ Теория правосудия. В 3-х томах. Фурсов Д.А., Харламова И.В. Т. 2: Гражданское судопроизводство как форма отправления правосудия. - М.: «Статут», 2009, էջ 437, Загайнова С.К. Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Автореф. дисс... д.ю.н., - Екатеринбург, 2008, էջ 14:*

<sup>3</sup> *Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Арбитражный процесс. Решенкин А.Г., Павлов Н.В. О языке судебного решения и стиле судебного акта // Вестник ВАС РФ. – М., 2001, № 7, 2008.*

**VIII. Պրակտիկայի նյութեր վկայակոչելիս** տողատակում կատարված հղման մեջ նշվում են տվյալ նյութն անհատականացնելու և այն գտնելու համար անհրաժեշտ տեղեկություններ:

*Օրինակ՝*

<sup>1</sup> *Տե՛ս Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.02.2010 թ. վճիռը՝ քաղաքացիական գործով ըստ հայցի Արսեն Սաֆարյանի ընդդեմ «Զուղա» ՍՊԸ-ի՝ հարկադիր պարապուրդի բռնագանձման պահանջի վերաբերյալ, [www.datalex.am](http://www.datalex.am):*

<sup>2</sup> *Տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի փետրվարի 28-ի «Դատական պրակտիկայի ամփոփում անցկացնելու մասին» թիվ 01L որոշման հիման վրա ՀՀ առաջին ատյանի դատարաններում 2006 թվականին ավարտված քաղաքացիական գործերով դատական պրակտիկայի ամփոփման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը, Դատական իշխանության պաշտոնական կայք՝ [www.court.am](http://www.court.am):*

Պետք է նկատի ունենալ, որ միևնույն աղբյուրին կրկին հղում կատարելիս աղբյուրի մասին լրիվ տեղեկատվությունը նշելու փոխարեն ընդունված է նշել է՝ «Տե՛ս» բառը, հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան առաջին տառերը, ապա աշխատության անվանման փոխարեն՝ «նշված աշխատ.» նշագրումը, որից հետո նշվում է էջը, որտեղ շարադրված է մեջբերվող կամ վկայակոչվող միտքը: Ընդ որում, եթե մեջբերվող միտքը վերցված է աղբյուրի այն էջից, որին հղում է արվել նույն էջում կատարված նախորդ մեջբերման ժամանակ, ապա

օգտագործվում է «նույն տեղը» նշագրումը, իսկ էջը կրկին չի նշվում:

*Օրինակ՝*

<sup>1</sup> *Տե՛ս Դիրանյան Ա.Ա., Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 68:*

<sup>2</sup> *Տե՛ս Դիրանյան Ա.Ա., նշված աշխատ., էջ 110:*

<sup>3</sup> *Տե՛ս նույն տեղը:*

Հաջորդ էջում միևնույն աղբյուրին հղում կատարելիս աղբյուրի մասին տեղեկատվությունը ցանկալի է նշել լրիվ: Այլ էջերում կրկնվող հղումներում կարող է նշվել հեղինակը, աշխատության վերնագիրը, շարունակությունը՝ բազմակետերով և էջը:

**IX. Շարադրանքի այլ մասերին հղումներ** կատարվում են մտքերի կրկնություններից խուսափելու, ինչպես նաև նախորդ շարադրանքում արտահայտված մտքերին կրկին ուշադրություն հրավիրելու նպատակով: Նման հղումներ կատարելիս տողատակում նշվում են աշխատության այն գլուխը, պարագրաֆը և ենթապարագրաֆը, որում տվյալ հարցը արծարծվել է: Կարող են նշվել նաև համապատասխան էջերը:

*Օրինակ՝*

<sup>1</sup> *Այդ մասին տե՛ս սույն աշխատանքի երրորդ գլխի 2-րդ պարագրաֆը:*

<sup>2</sup> *Դատական ակտերի տեսակների մասին տե՛ս սույն աշխատանքի 10-15 էջը:*

## **7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԾԱՎԱԼԻՆ ԼԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ**

Աշխատանքի տեքստը ներկայացվում է տպագիր՝ հետևյալ պահանջների պահպանմամբ՝

- թղթի ձևաչափը՝ А4,
- տպագրությունը՝ միակողմանի,
- լուսանցքները՝ վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2.5 սմ, ձախից՝ 3 սմ, աջից՝ 1.5 սմ,
- տառատեսակը՝ հայերեն՝ Arial Armenian կամ Sylfaen, ռուսերեն և անգլերեն՝ Arial կամ Times New Roman,
- տառաչափը՝ տեքստում՝ 12, տողատակում՝ 10,
- տողերի միջև հեռավորությունը՝ 1.7-2 համակարգչային քայլ,
- էջում տողերի քանակը՝ 28-30,
- նոր պարբերությունը՝ 1 սմ խորքից,
- հղումների համարակալումը՝ արաբական թվերով, ամեն էջում 1-ից.

- Էջի համարակալումը՝ Էջի ստորին լուսանցքի աջ կողմում (տիտղոսաթերթը չի համարակալվում):

Ավարտական և մագիստրոսական աշխատանքների ծավալին ներկայացվում են որոշակի պահանջներ՝

- ավարտական աշխատանքներ՝ 40-60 էջ,
- մագիստրոսական աշխատանքներ՝ 60-80 էջ:

## **8. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ**

### **Ավարտական աշխատանքներ**

Ավարտական աշխատանքի կատարման ընթացքը վերահսկվում է գիտական ղեկավարի և համապատասխան ամբիոնի կողմից:

Աշխատանքի պաշտպանության նախապատրաստման ընթացքն սկսվում է աշխատանքը մինչև տվյալ քննական տարվա մարտի 10-ը գիտական ղեկավարին ներկայացնելով:

Պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է՝

ա) աշխատանքի ներկայացումը ամբիոնի քննարկմանը (աշխատանքի հետ ներկայացվում է ղեկավարի կարծիքը, որը ներառում է կատարված աշխատանքը սույն ուղեցույցով սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ եզրակացություն):

բ) աշխատանքի նախնական քննարկումը ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ.

գ) աշխատանքի նախնական քննարկման ընթացքում կատարված դիտողությունների հիման վրա երկշաբաթյա ժամկետում աշխատանքի լրամշակումը և լրացուցիչ քննարկումը.

դ) ամբիոնի որոշմամբ աշխատանքի երաշխավորումը պաշտպանության.

ե) աշխատանքի գրախոսումը.

զ) աշխատանքի հրապարակային պաշտպանությունը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում:

Ավարտական աշխատանքն ամբիոնի կողմից երաշխավորվում է պաշտպանության, եթե այն ընդհանուր առմամբ բավարարում է սույն ուղեցույցով ներկայացված պահանջները, այդ թվում՝ զուրկ է Էական թերություններից, ձևակերպված է պատշաճորեն, ունի ինքնուրույնության զգալի աստիճան, պարունակում է նորույթ:

Ավարտական աշխատանքի պաշտպանությունը իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգի:

### **Մագիստրոսական աշխատանքներ**

Մագիստրոսական հետազոտության կատարման ընթացքը վերահսկվում է գիտական ղեկավարի և համապատասխան ամբիոնի կողմից:

Կատարված աշխատանքների արդյունքները ստուգելու համար սահմանված ժամկետներում, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին կազմակերպվում են ստուգարքներ, որոնց ընթացքում իրականացվում է մագիստրանտի ատեստավորում հետևյալ կարգով:

### **Առկա ուսուցում**

Նախատեսված են 4 ստուգարքներ:

1-ին ստուգարքը նշանակվում է ստուգարքից առնվազն 7 օր առաջ գիտական ղեկավարին թեմայի աշխատանքային պլանը, նորմատիվ իրավական ակտերի, գրականության, պրակտիկայի նյութերի նախնական ցանկը ներկայացնելու և դրանց վերաբերյալ գիտական ղեկավարի դրական եզրակացության առկայության դեպքում:

2-րդ ստուգարքը նշանակվում է ստուգարքից առնվազն 10 օր առաջ աշխատանքի 1/2-ը գիտական ղեկավարին ներկայացնելու և դրա վերաբերյալ գիտական ղեկավարի դրական եզրակացության առկայության դեպքում:

3-րդ ստուգարքը նշանակվում է ստուգարքից առնվազն 10-օր առաջ աշխատանքի 2/3-ը գիտական ղեկավարին ներկայացնելու և դրա վերաբերյալ գիտական ղեկավարի դրական եզրակացության առկայության դեպքում:

4-րդ ստուգարքը նշանակվում է աշխատանքը գիտական ղեկավարին առնվազն մինչև տվյալ քննական տարվա մարտի 10-ը ներկայացնելու և ամբիոնի կողմից պաշտպանության երաշխավորվելու դեպքում: Աշխատանքն ամբիոնի կողմից երաշխավորվում է պաշտպանության, եթե այն ընդհանուր առմամբ բավարարում է սույն ուղեցույցով ներկայացված պահանջները, այդ թվում՝ զուրկ է Էական թերություններից, ձևակերպված է պատշաճորեն, ունի ինքնուրույնության զգալի աստիճան, պարունակում է նորույթ:

### **Յեռակա ուսուցում**

Նախատեսված են 5 ստուգարքներ:

1-ին ստուգարքը նշանակվում է ստուգարքից առնվազն 7 օր առաջ գիտական ղեկավարին թեմայի աշխատանքային պլանը, նորմատիվ իրավական ակտերի, գրականության, պրակտիկայի նյութերի նախնական ցանկը ներկայացնելու և դրանց վերաբերյալ գիտական ղեկավարի դրական եզրակացության առկայության դեպքում:

2-րդ ստուգարքը նշանակվում է ստուգարքից առնվազն 10 օր առաջ աշխատանքի 1/3-ը գիտական ղեկավարին ներկայացնելու և դրա վերաբերյալ գիտական ղեկավարի դրական եզրակացության առկայության դեպքում:

3-րդ ստուգարքը նշանակվում է ստուգարքից առնվազն 10-օր առաջ աշխատանքի 1/2-ը գիտական ղեկավարին ներկայացնելու և դրա վերաբերյալ գիտական ղեկավարի դրական եզրակացության առկայության դեպքում:

4-րդ ստուգարքը նշանակվում է ստուգարքից առնվազն 10-օր առաջ աշխատանքի 2/3-ը գիտական ղեկավարին ներկայացնելու և դրա վերաբերյալ գիտական ղեկավարի դրական եզրակացության առկայության դեպքում:

5-րդ ստուգարքը նշանակվում է աշխատանքը գիտական ղեկավարին առնվազն մինչև տվյալ քննական տարվա մարտի 10-ը ներկայացնելու և ամբիոնի կողմից պաշտպանության երաշխավորվելու դեպքում: Աշխատանքն ամբիոնի կողմից երաշխավորվում է պաշտպանության, եթե այն ընդհանուր առմամբ բավարարում է սույն ուղեցույցով ներկայացված պահանջները, այդ թվում՝ գուրկ է էական թերություններից, ձևակերպված է պատշաճորեն, ունի ինքնուրույնության զգալի աստիճան, պարունակում է նորույթ:

Մագիստրոսական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է՝

ա) աշխատանքի ներկայացումը ամբիոնի քննարկմանը (աշխատանքի հետ ներկայացվում է ղեկավարի կարծիքը, որը ներառում է կատարված աշխատանքը սույն ուղեցույցով սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ եզրակացություն):

բ) աշխատանքի նախնական քննարկումը ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ.

գ) աշխատանքի նախնական քննարկման ընթացքում կատարված դիտողությունների հիման վրա երկշաբաթյա ժամկետում աշխատանքի լրամշակումը և լրացուցիչ քննարկումը.

դ) ամբիոնի որոշմամբ աշխատանքի երաշխավորումը պաշտպանության.

ե) աշխատանքի գրախոսումը.

զ) աշխատանքի հրապարակային պաշտպանությունը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում:

Ավարտական աշխատանքի պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգի: